

Դասախոսություն 2.1. Խտրականության տեսակները

Միջազգային չափանիշներով տարբերակվում են խտրականության հետևյալ տեսակները՝

- Ուղղակի խտրականությունը,
- Անուղղակի խտրականությունը,
- Խտրականության հրահրումը,
- Հետապնդումը,
- Սեգրեգացիան,
- Վիկտիմիզացիան և
- Զուգորդված (ասոցացված) խտրականություն:

Ուղղակի խտրականություն՝ անձի նկատմամբ պաշտպանված հատկանիշներից որևէ մեկի կամ մի քանիսի կամ դրանց հետ ասոցացման հիմքով դրսևորված վերաբերմունք է, որի արդյունքում անձը հայտնվում է համանման հանգամանքներում գտնվող այլ անձի համեմատ նվազ բարենպաստ իրավիճակում: Ուղղակի խտրականությունն առկա է նաև կնոջ նկատմամբ նվազ բարենպաստ վերաբերմունքի դեպքում՝ հղիության կամ մայրության հիմքով:

Օրինակ՝

ՄԻԱՎ վարակակիր կնոջից կեսարյան հատում իրականացնելու համար հավելյալ վճար են պահանջում՝ պատճառաբանելով, որ իր վիրահատությունից հետո գործիքները «դեն են նետում»: Քանի որ ՄԻԱՎ վարակ ունեցող պացիենտին բուժօգնություն ցուցաբերելիս ախտահանման և վարակի կանխարգելման միջոցառումները չեն տարբերվում այլ պացիենտների դեպքում իրականացվող միջոցներից, չունի օբյեկտիվ հիմք, այն լրացուցիչ վճարի պահանջը անօրինական է, ինչը նշանակում է, որ դա ուղղակի խտրականություն է:

Անուղղակի խտրականություն՝ առերևույթ չեզոք քաղաքականություն, վերաբերմունք, պայմաններ, չափանիշներ կամ պրակտիկա, որոնց կիրառման արդյունքում անձը, պաշտպանված հատկանիշներից որևէ մեկի կամ մի քանիսի կամ դրանց հետ ասոցացման հիմքով, հայտնվում է համանման հանգամանքներում գտնվող այլ անձանց համեմատ էապես անբարենպաստ իրավիճակում, կամ որն անհամաչափորեն անբարենպաստ է ազդում անձանց որոշակի խմբի վրա, կամ հավասար վերաբերմունք անձանց նկատմամբ, ովքեր գտնվում են բնույթով տարբեր պայմաններում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նման քաղաքականության, վերաբերմունքի, պայմանների, չափանիշների և պրակտիկայի

կիրառումը հետապնդում է իրավաչափ նպատակ, անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում, իսկ գործադրված միջոցները համաչափ են:

Օրինակ՝

Եկեղեցու կողմից հովանավորվող հիվանդանոցը աշխատանքի ընդունելու հայտարարությունում նշում է, որ աշխատանքի է ընդունում միայն քրիստոնյաների:

Չնայած նրան, որ հայտարարության մեջ նշվում չէ որևէ խումբ ով չի կարող դիմել աշխատանքի, ինքնաբերաբար ստացվում է, որ քրիստոնեությունից բացի այլ դավանանքի պատկանողները չեն կարող դիմել աշխատանքի:

Նշված իրավիճակը անուղղակի խտրականություն է:

Խտրականության հրահրում՝ անձին ուղղված հրահանգ է, ցուցում կամ կոչ մեկ այլ անձի խտրականության ենթարկելու համար:

Օրինակ՝

Ոստիկանության աշխատակիցը հրահանգում է տեղամասային օնկոլոգին օփիոիդային ցավազրկողներ չնշանակել պացիենտ Ա.Ա.-ին, որովհետև նա թմրամոլ է: Սա խտրականություն է հիվանդության առկայության հիման վրա:



Թվացյալ ռացիոնալ պահանջը՝ թմրամիջոցների հավանական չարաշահումը կանխելը, իրականում հանդիսանում է խտրականության դրսևորում, որովհետև խախտվում է մարդու անմեղության կանխավարկածը և առողջության առավելագույնս հասանելի մակարդակի իրավունքը:

Հետապնդում` անձի նկատմամբ անցանկալի վերաբերմունք է պաշտպանված հատկանիշներից որևէ մեկի կամ մի քանիսի կամ դրանց հետ ասոցացման հիմքով, որի արդյունքում նրա շուրջ ստեղծվում է կամ որի նպատակն է նրա շուրջ ստեղծել ոչ բարյացակամ, թշնամական, վիրավորական, նվաստացնող կամ մերժողական միջավայր.

Օրինակ`

Ընդունարանի աշխատակիցը այլ պացիենտների ներկայությամբ վիրավորական մեկնաբանություններ է անում անվճարունակ պացիենտի նկատմամբ: Սա խտրականություն է սոցիալական և գույքային վիճակի հիման վրա:

Մեզրեզացիա` արտահայտվում է որոշմամբ, գործողությամբ կամ անգործությամբ, որոնք ուղղակի կամ անուղղակի հանգեցնում են անձի կամ մի խումբ անձանց որոշակի հատկանիշների հիման վրա այլ անձանցից տարանջատմանը, բաժանմանը, տարբերակմանը` առանց իրավաչափ նպատակի, օբյեկտիվ հիմքերի և ողջամիտ համաչափության.

Վիկտիմիզացիա` դիտավորյալ գործողություն կամ անգործություն, որը սույն օրենքի շրջանակում իր իրավունքների պաշտպանության նպատակով իրավասու մարմիններին դիմում կամ բողոք ներկայացրած անձի համար հանգեցրել է բացասական հետևանքների.

Օրինակ`

Բժիշկը սկսել է անտեսել պացիենտի գանգատները այն բանից հետո, որ պացիենտը բողոքել է հիվանդանոցի տնօրինությանը բուժքույրերի անարգալից և վիրավորական վերբերմունքից:

Զուգորդված (ասոցացված) խտրականություն` խտրականություն այն անձի նկատմամբ, ով, թեև օժտված չէ սույն օրենքով նախատեսված պաշտպանված հատկանիշներով, սակայն ազգակցական, ամուսնական կամ այլ կապ ունի նման հատկանիշներ ունեցող անձի կամ անձանց խմբի հետ.

Օրինակ`

Բժիշկը սկսել է անտեսել պացիենտի գանգատները այն բանից հետո, որ իմացել է

պացիենտի որդու նույնասեռական լինելու մասին: